ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
28 հուլիսի 2021 թվականի N 301-Ա

«ՕԽՏԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2021 թվականի հուլիսի 27-ի N 299-Ա որոշումը և Ա.Հովհաննիսյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1.Աշոտ Հովհաննիսյանին 2021թ. հուլիսի 28-ից նշանակել «Օխտարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

2.«Օխտարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Նելլի Կարապետյան	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի ավագ մասնագետ (հանձնաժողովի նախագահ),
Մարի Համբարձումյան	Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ
Վարդան Ստեփանյան	«Օխտարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն, հանձնող
Աշոտ Հովհաննիսյան	«Օխտարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար, ընդունող:

3. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

28.07.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Ք. Կապան